

## ՊԱՏՄԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ.

### I

#### Դրօսակի օրինութիւնը.

Համաշխարհային պատերազմը հիմքից ցնցեց հայութիւնն ու հայ աշխարհը. լինել-չլինելու խնդիրը զօրեղ կերպով ծառացաւ հայութեան առաջ: Եւ ամեն կողմից հայ երիտասարդութիւնը գունդագունդ դիմեց դէպի պատերազմի վայրը, դէպի վտանգուած հայրենիքը՝ իւր կեանքի գնով ազատելու այն ամենը, որ դեռ հնար էր ազատել:

Օդտական էր, նպատակայարմաբ էր այդ անձնազոհութիւնը. Ազնիւ ոգևորութեան հանդէպ սառն դատողութիւնը տեղի պիտի տար անհրաժեշտօրէն: Եւ կազմուեցան հայ կամաւորների գունդեր, որոնք կոտորուեցան ու կոտորեցին, հերոսական գործեր կատարեցին... սակայն այդ ամենի մասին պատմութիւնը կխօսի:

Ինչպէս ամեն մի զինուորական միութիւն, հայկական գունդերն էլ ունէին իրենց դրօշակը: Դրօշակը՝ մարտիկի համար սրբութիւն է, նրա զաղափարի, նրա զօրութեան մարմացումն է: Եւ ամեն մի զինուոր իւր սրբազան պարտականութիւնը կհամարէ աւելի շուտ իւր կեանքը զոհել, քան թէ թոյլ կտայ, որ թշնամին մօտենայ իւր դրօշակին, ուր մնաց թէ գերի վերցնէ:

Եւ դրօշակը տրւում է գնդին մի առանձին հանդիսաւորութեամբ, մի առանձին խորհրդաւոր արարողութեամբ. ազգի սիրտը, ազգի հոգին դրոշմւում է դրօշի վրայ վեհօրէն ու սրբօրէն:

Ահա թէ ինչու ամեն անգամ, երբ անձնուէրների զինակիր խմբերը արժանանում էին ստանալու նուիրական դրօշակը հայ հասարակութեան կողմից, աշխատում էին այդ հանդիսաւոր ըոպէն սրբագործել կրօնական արարողութեամբ: Որովհետեւ հայ ազգի համար իւր նախնիքներից ստացած ամենամեծ, ամենավեհ աւանդը է իւր մայրենի եկեղեցին՝ որպէս արտադրութիւն հայ ցեղի համայնական ստեղծագործութեան:

Սակայն ինչպէս էր կատարւում հնում հայի պատերազմական դրօշակի օրհնութիւնը. ի՞նչ ծէս կար դրա համար հաստառած: Այս մեզ յայտնի չէ: Եւ ի՞նչ ծէս է կատարւում ներկայումս, երբ կամաւորներին յանձնուելիք դրօշակը օրհնում են եկեղեցական հանդէսով, հայ հոգեորականութեան ձեռքով: Նոյնպէս յայտնի չէ: Այդտեղ ընդարձակ ասպարէզ է բացւում իւրաքանչիւր հողեռ

պաշտօնեայի հնարամտութեան առաջ, թէպէտ մայր մաշտոցի մէջ կան ցուցումներ:

Սակայն մենք ոչ այնքան հեռաւոր անցեալում ապրել ենք սոյնպէս մի հերոսական, վառ յոյսերի ու ոգեստութեան շրջան, երբ հայ կամաւորների գունդերը ուս ուսի կուռեմ էին ուս դօրքի հետ միասին և, շատ անդամ էլ, անկախօրէն ճանապարհ բաց անում ուսաց բանակների համար: Այդ սրանից ուղիղ մի դար առաջ էր, այն միջոցին, երբ ուսաց պետութիւնը քայլ առ քայլ մեծամեծ խոչնդուուներով և ուժգնութիւն գործ դնելով առաջանում էր դէպի: Արարատեան դաշտը, դէպի ս. Էջմիածին: Այն միջոցին եթէ մի կողմից հայ կամաւորների պարագլուխները հայ մելիքներն էին, միւս կողմից Ներսէս աշտարակեցին էր, այդ իսկապէս փոթորիկը:

Ահա այդ միջոցին էլ հայ կամաւորներին տրւում էր դրօշակ, այդ միջոցին էլ հայ դրօշակը օրհնուում էր եկեղեցական արարողութեամբ, որի նկարագիրը կայ մնացած մեր նախորդների ձեռագրերի մէջ:

### Կանոն օրհնութեան դրօշակի.

**Եպիսկոպոսն.—Հայր մեր:**

**Քահանայք.—Սուրբ Աստուած, Խաչեցար, Փառաւորեալ:**

**Դպիրն.—Սաղմ. 143. Օրհնեալ Տէր Աստուած իմ, որ ուսոյց. լման:**

**Քահանայք.—Նորհեա մեզ Տէր ի գիշերի զերկնային և այլն. լման:**

**Դպիրն.—Սաղմ. 17. Սիրեցին զքեզ Տէր. լման:**

**Սարկաւագն.—Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք:**

**Վասն Հայրապետին մերոյ:**

**Վասն սրբագան Առաջնորդին:**

**Վասն ամենապարեպաշտ և ինքնակալ. լման:**

**Վասն օրհնելոյ զդրօշակս զայս Աստուածային օրհնութեամբ իւրով զՏէր աղաչեսցուք:**

**Վասն պարզելոյ զինուորութեանս այսմիկ՝ և որում կըէն զդրօշակս զայս, զհամարձակութիւն և զզօրութիւն ի խորտակել և ի ջախջախել զզօրութիւն հակառակորդաց մերոց անպատում ողորմութեամբ իւրով, զՏէր աղաչեսցուք:**

**Վասն փրկելոյ զմեզ յամենայն նեղութեանց և ի վշտաց մերոց զՏէր աղաչեսցուք:**

**Զամենասրբուհի զԱստուածածինն: Եւ ևս միարան: Զանձինս մեր: Ողորմեաց:**

**Եպիսկոպոսն.—Զի դու ես զօրութիւն և հաստատութիւն ժողովրդեան քո և քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից ամէն:**

Եպիսկոպոսն և քահանայքն միաբան.—Օրհնեսցի և սրբեսցի դրոշակ զինուորութեանս հայոց այս նշանաւ սուրբ խաչիս և սուրբ աւետարանաւ և աւուրս շնորհիւ անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն, Երիցու:

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ, և այլն:

Եպիսկոպոսն կամ Քահանայն սրսկէ օրհնեալ ջուրը զդրօշակն և զզինուորութիւնն:

Սարկաւագն.—Սուրբ խաչիւս:

Եպիսկոպոսն—Պահպանիչ և յոյս հաստացելոց, և այլն:

Սարկաւագն.—Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ, կեցու և ողորմեա:

Եպիսկոպոսն տացէ զդրօշակն այնմ՝ որ կրելոց է զայն՝ ասելով.

Ընկալ զդրօշակս զայս օրհնեալ Աստուածային օրհնութեամբ, զի եղիցի սա թշնամեաց Քրիստոնէից ազգի ահաւոր և զարհուրելի, և պարզեցնեցէ քեզ Տէր շնորհս. զի ի փառս ամենասուրբ անուան Հօր անվեաս և արիաբար անցցես ընդգունդս թշնամեաց:

Սարկաւագն.—Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, և այլն:

Եպիսկոպոսն օրհնելով զամենեսեան.—Օրհնութիւն Աստուածային եղիցի ընդ ձեզ ամենեսին, զօրացարուք և հաստատեսցին սիրոք ձեր և յոյս ձեր առ Տէր, զի նա ինքն յաղթեսցէ թշնամեաց ձերոց: Եւ ապա Հայր մեր:

1827 թ.

## II

### Հայոց բանակի կազմութիւնը:

Ներկայ աշխարհասասան ոլատերազմին մասնակցող հայ կամաւոր զինուորութեան կազմակերպութեան մասին առ այժմ հնարաւորութիւն չունինք տեղեկութիւններ հաղորդելու, ուստի բաւականանք մի դար առաջ, 1827 թուին, Ներսէս Աշտարակեցու առաջնորդութեամբ ու ձեռներէցութեամբ կազմակերպուած հայկական զինուորութեան մասին եղած տեղեկութիւններով: Այդ տեղեկութիւնները քաղում ենք կէս մասում ոռւսերէն և կէս մասում հայերէն տպագրուած մի թերթից, որի տակը ստորագրած է. ռՀրամանատար Զօրաց Արասանի, Կօյեննոյ Ղուբերնատօր Տիֆլիսայ. Դիներակ Աղիւտանտ Միպիաղինք: Այդ յայտարարութիւն, որ կրում է «Առաջադրութիւն Հայոց Նոր սարքվող զօրքի համար» վերնագիրը, կազմուած է ժամանակի աշխարհաբառով խառն թիֆլիսի բարբառի հետ և բաղկացած է հետևեալ յօդուածներից, Փակաղծերի մէջ դրուածները մերն են:

1. Հայոց ղօրքը կունենայ բատալիօններ:
2. Բատալիօնի մէջ են մտնում Հայք իրանց սեփական ցանկութեամբն:
3. Նրանք վեր են կալնվում 18 տարեկանից մինչև 30 տարեկան մարդիկ, ապա էս կանօնն հիմի չէ կարող դայիմ (հաստատ, ամուր) պահուանվիլ, միայն պահանջվում է, որ մարդս բաւական զօրութիւն ունենայ պախօտ (արշաւ) գնալու համար:
4. Նրանք ազատ կուլին իրանց օղլուշաղովն (ընտանիքով) ամենայն խարջ (հարկ) տալուցն և ծառայութէնիցն, քանի ժամանակ որ էս ծառայութեան մէջն կուլին:
5. Նրանք պէտք է կապվին (պարտաւորուին) միայն ծառայել էնքան ժամանակ, քանի կոխին Նզլրաշի (պարսկի) հետ կուերկարվի, իժում (ապա, այնուհետև) նրանք կու ազատվին գնալ իրանց տներն, կամ մտնել ծառայութիւն զօրքի մէջ:
6. Նրանց առջևն, կարգվելու ժամանակին (ընդունուելու միջոցին), կը կարդան մեծ Պետրոսէն նրած զօշուն (զօրք) խաղացնելու կարգն և էն պատիժներն, որն որ կու վայելէ օրէնք կոտրողին (յանցաւորին), և զարուլ են անում (համաձայնացնում են) էնդունցն, ինչպէս որ զօշունի չինովնիկներն (на равнѣ съ воинскими чинами):
7. Նրանք օրթում են ուտում հաւատարիմ ծառայութեան համար:
8. Էս կանոններու վրայ վեր են կալնվում ամեն ցանկացօղներն և նրանց ապրուստ կուտան խազնայից, մինչև լրքցվի առաջին բատալիոնի կարգը:
9. Կազմուածք զինուորութեանն.

Շտաբ օֆիցեր . . . 1.	Աղիւտանտ . . . . .	1.
Կապիտանք . . . 2.	Զուռնա ածօղք (горнистъ)	4.
Շտարս կապիտանք	Բարարան ածօղք	4.
Պոլուտչիկ . . . 4.	Աւատէր օֆիցէր . . .	80.
Պոլապուչիկ . . . 4.	Զինուորք . . . . .	800.
Պրապուշչիկ . . . 4.	Զինուորաց սէլապանք	40.
Խաղինադար (դնձապհ.) I.		

10. Օֆիցարների տեղ ջոկվում են ունտէր օֆիցարներէմէն հրամանաւ Գլխաւոր Զօրակետին իրանց դօչաղութեան, խելքի, ջերմեռանդութեան զօրա:
11. Իրանց յատուկ քաջութեան համար կու յայտնվին վարձ (կպարզեաւուին) ստանալու առաջին Օֆիցէրական չինով:
12. Զարթնէ էստուրն (բացի այս) իւրաքանչիւր բատալիօնի մեծաւորն կուլի Շտարս Օֆիցէր կամ Կապիտան ներկայ (իսկական) ծառայութեան, որ պիտի լինի հայոցմէն:

13. Ամէն բատալիոնի համար նշանակվում են Քահանայ և Հէքիմ ընակչացմէն:
14. Ամէն բատալիոնն կու բաժանվի յութն հարիւր, հարիւրն ի տասն տասնեակս:
15. Իւրաքանչիւր զինուորի խաղնիցը կուտան թվանք, թասմա դօտիկով պարկ, 30 քցելու գուլլով (боевые патроны) և 10 չախմախի քարով:
16. Իւրաքանչիւր զինուորն պիտի ունենալ իւր սեփական խանչալն և տիլօյի (կտաւէ) պարկն ուսոյ վրայ չորս օրվան պաշար տանելու համար:
17. Ունտէր Օֆիցէրներն ունենան թուր խանչալի տեղ:
18. Օֆիցէրներն ունենան մին ջուխտ դարանչա (пистолетъ) և թուր:
19. Շուրեր (զգեստ).
- Չուխէն ըօղ մահուղից (сукно сърое).
- Արխալուղն նաշուրի մուղ ոանգն (զոյն, темн. бурметь).
- Շարվարն նաշուրի էլի էն ոանգն:
- Գդակն վրացու նման:
- Եափնջի:
20. Ամէն չինօվնիկ (всѣ чины) ստանայ տօնլուխ (ռոճիկ) ինչպէս զինուորական աստիճանաւորներն ներկայ (իսկական) ծառայութեան:
21. Շուրի (զգեստի) տեղ ստանան զինուորքն 10 մանէթ սպիտակ դրամ մէկ տարումն, և Ունտէր Օֆիցէրքն 15 մանէթ, էս փողովն պիտին շուրեր կարել իրանց համար, մինչև կառավարութիւնն կարգեցէ տալ նրանցն շուրեր խաղինիցն:
22. Էդ զօրքին կուտան չաղիքներ (վրաններ):
23. Բարաքանչիկ և զուռնայ ածօղներն պէտք է հանել պօլիերէմէն (прикомандируются изъ полковъ):
24. Պաշար ստանան ինչպէս ներկայ (իսկական) զօրքն:
25. Երբ որ կարելի կուլի (կլինի), կը շինվին պրովիանտսկօյ և կօմմիսարիատսկօյ դավթարներ (մատեաններ) և կուտան նրանցն 10 օրվայ պաշար:
26. Ինչվախտ որ դաւթար և պաշարն կուտան, էն օրվանիցն օրական տօնլուղն (ռոճիկ) կու վերջանայ:
27. Հիւանդներուն կու ընդունին և կու պահպանեն զինուորական հիւանդանոցներումն:
28. Իւրաքանչիւր տասն զինուորն կունենայ մէկ բեռ բարձելոյ ձի, վրան, պղինձ (խալկին) և երկու փութ և քսան ու հինգ փունտ սուխարի. քսանի համար կուլի մէկ մշակ. Յիսունի (50 հոգու) համար մէկ կացին և մէկ թի. Ամէն մէկ հարիւրը մին դաստայ կուլին, (въ каждой сотнѣ учредятся артели):

## 29. ማኅበርቻዎች

Պիտին զիտենալ շատ հարկաւոր մասն եազրի խաղալուն  
(егерское учение) և նշանին միզնել (? խփել, զարնել), բա-  
ժանվիլ քսանն միտսին, հարիւրն միտսին, նաև ըերդ կազ-  
մել (строить отдельнія. взводы, колоны, къ атакѣ и карѣ):

Դարձույ կանգնիլ ամենայն հարկաւոր զգուշութեամբ:

Ամէնու վրա աւելի պահանջվում է կատարեալ և մռնջ  
հնազանդութիւն մեծաւորաց:

Խաղացնելու խօսքերն (командные слова) պիտին լինիլ  
Հայոց լեզվով:

Նրանց կուտան կարճացրած կանոններ Մեծին Պետրոսի  
և ուրիշ սահման կարգին ծառայութեան (օ строевой службе).

Տվյալներ. 24 մայիսի 1827 ամիս

Ինչպէս ընթերցողն էլ կնկատի, թարգմանիչը եղել է մի շատ  
անհմուտ մարդ: Նա չէ հասկացել նոյն իսկ և ամենապարզ նա-  
խադասութիւնները, ինչպէս, օր. подвергаются թարգմանիչը է  
դարձւ են անում, այսինքն համաձայնութեն, կառան настое-  
щей службы թարգմանիչը է սներկայ ժառայթին:

Ասենք թարգմանութեան հարազատութեան կողմից զեռ  
մինչև այժմ էլ մենք ազատ չենք կուպիտ սխալներից. զեռ երեկ  
էր, «Մշակը» դրողիստ յ(դեղավաճառ) բառը թարգմանել էր  
կառապան, կարծելով թէ դա դրոգի բառիցն է, կամ մինչև այժմ  
էլ բառարանների մէջ կդանէք մարտնչելու բառի բացարութիւնը՝  
առօրոնի ներկով նկարող», կամ «օրիանտացիա» արևելեան քա-  
ղաքականութեան հետեւզ և այլն:

III

Հայկական դրումանիւը.

Իւրաքանչիւր պետութիւն ունի իւր յատուկ դրոշմանիւր,  
դրուագը, գերը: Անշուշտ հայերն էլ ունեցել են իրենց ազգային  
նշանը, ազգային զոյնը: Սակայն հաստատապէս պնդել, թէ մենք,  
արգարե, ունեցել ենք մի ազգային նշան, որ մեր ամրող պատ-  
մութեան ընթացքում տիրապետող է եղել—կարող չենք: Ահա  
այդ է պատճառը, որ երբ Հայաստանի մի մասն անցաւ Ռու-  
սիայի ձեռքը և կազմուեցաւ Հայկական Նահանգը, ոռւսաց կա-  
ռավարութիւնը հետամուտ եղաւ ստուգիւ իմանալու, թէ որն է

հայ ազգի պետական-աղքային դրոշմանիշը, որպէս զի այդ և հաստատուի որպէս զերբ Հայկական Նահանգի համար։ Ակլըրում շատ դժուարացան այդ բանը որոշելու ոչ միայն ոռւսները, այլև հայերը։

«Հոգևորական գործոց պ. մինիստրը» Բլուզով 1832թ. սեպտեմբերի 29-ին դիմում է Կարբեցի Յովհաննէս Բ. կաթուղիկոսին մի գրութեամբ, որի մէջ յայտնում է, թէ արդարադատութեան մինիստրը, ի կատարումն բարձրագոյն հրամանի թագաւոր Կայսեր՝ որով պատուիրել է ներկայացնել իրեն ի հաստատութիւն Հայկական Նահանգի զերբը, դիմել է Գիտութեան Ճեմարանի փոխ-Նախագահին խնդրելով իրեն ուղարկել Հայոց թագաւորութեան զերբը։ Փոխ-Նախագահը իւր կողմից դիմել է արևելագէտակաղեմիկ Ֆրէնին, որից ստացած տեղեկութիւնները հաղորդել է արդարադատութեան մինիստրին։ Սակայն Ֆրէնն էլ խոստովանելով իւր անհմտութիւնն այդ առարկայի վերաբերմամբ, առաջարկում է դիմել «Խանան դը Ցիրրիդաին, որ բնակութիւն ունէր թիֆլիսում։ Ուստի և Հոգևորական գործոց մինիստրը խնդրում է կաթուղիկոսից հարկաւոր տեղեկութիւնները ստանալ այդ դիտնականից և հաղորդել իրեն։ Միևնոյն ժամանակ մինիստրը կաթուղիկոսին ուղարկում է նաև ակադեմիկ Ֆրէնի գրութեան թարգմանութեան պատճէնը։ որի բովանդակութիւնն այս է. — Ֆրէնը ցաւ է յայտնում, որ իրեն եղած հարցին այս անգամ բաւարարութիւն տալ կարող չէ, որովհետեւ հայոց լեզուն բոլորովին օտար է իրեն համար և իւր ճիւղը ոչինչ առնչութիւն չունի հայոց պատմութեան հետ։ Բայց իւր նախկին ընթերցուածքներից յիշում է միայն, որ ուկէ արծիւր հայկական զերբի նշաններից մէկն է, իսկ ապագայում առիւծը դարձաւ հայոց թագաւորութեան զերբ։ Ուկէ արծիւր նա պատահել է Արշակունիաց Վաղարշակ թագաւորի պատմութեան մէջ. այդ զերբն են դործածել նաև Ռուբիննեանները մինչև XII դարու վախճանը, երբ որ Լևոն II-ի օրով Հենրիկոս VI կայսրի ընծայած առիւծը փոխարինեց արծիւրն։ Ասում են, որ այդ առիւծը դարդարուած էր կայսերական թագով, և յիրաւի յիշեալ Լևոն թագաւորի օրով կտրուած դրամի վրայի առիւծը թագակիր է, Նոյն Լևոնի միւս դրամների վրայ դրոշմուած է ծառս ելած երկու առիւծ, ոլուխները դէպի յետդարցրած։ իսկ նրանց մէջ տեղը զանուում է Կրկնակի խաչ։ Նրայաջորդների տակ էլ նոյն առիւծն է՝ փոփոխած. այսպէս, Հեթումի դրամի վրայ առիւծը խաչով է. Թէոդորոս II-ինը՝ սլարդ առիւծ։ Յիշում է նաև որպէս թէ Հայկի և Տիգրանի օրով գործածուած եօթ գլխանի վիշապը, Զայրմայրի արծիւր, Տրդատի օրով՝ դրօշակիր զառը։ Ֆրէնն ասում է, այս և նման ուրիշ նշաններ էլ են

նղել, բայց արդիօք զըսնք միացած պետական գերը կազմել են—  
բրեն յայտնի չէ: Այդ ինդիքը կարեղ է պարզել միայն հայ զըս-  
րութեան, կնիքներին, զրամներին և այլ նման հանգամանքներին  
ծանօթ և հմուտ անձը, որպիսին էր Ան-Մարտէնը: բայց քանի  
որ նա չկայ, ուստի ամենից լաւն է դիմել պլ. «Էսահան դը Ցիր-  
քեդ» գիտնական հային, որ յայտնի է իւր բազմաթիւ շատ յարդի  
երկասիրութիւններով: Նա 1806 թ. Ան-Մարտէնի հետ միասին  
դրեց . . . և յիշատակում է նրա զրուածքները: Ակզրում նա նշա-  
նակուած էր Պարիզի Ecole speciale des langues Orientales vivan-  
tes-ում, իսկ այժմ գտնւում է Վրաստանում կամ Խուսաց Հայա-  
տանում Հայոց Հոգեոր Անմինարիայում:

Երեկի Ընթերցողը հասկացաւ, որ «Էսահան դը Ցիրքեդ»ը ժա-  
մանակին յայտնի հայազգի Յակոբ Շահան Զրակետն է, որ այդ  
միջոցին Ներսէս աշտարակեցու կողմից հրաւիրուած էր Ներսիս-  
հան դպրոց:

Շահան Զրակետը 1832 թ. դեկտեմբերի 30-ին մի զրութեամբ  
շնորհաւորելով կաթուղիկոսի նոր տարին, յայտնում է, որ սպա-  
սում է իւր նախորդ նամակի սկատասխանին, «ի վերայ արքայա-  
փառ նշանաց վաղեմի թագաւորաց հայոցս՝ խնդրելոց յերկուց  
վսեմափառ Նախարարաց Տէրութեան»: Ապա աւելացնում է. «Նոյն  
ինդիքը եկեալ էին և առ վսեմափառ կուսակալն մեր՝ մեծապա-  
րոնն Խօղէն: Հրաւիրեալ եմ ի սմանէ՝ ետու ի 27 ամսոյս՝ զամե-  
նայն կարելի ծանօթութիւնս՝ արարեալս այժմ, և զհոչակեալս ի  
Փարէս—ամօք ինչ յառաջ տպադրութեամբ զաղղիական լեզուաւ՝  
ի վերայ նոյն նշանաց, նաև ի վերայ թագաւորական սահմանա-  
զրութեանց նախարարական կարդադրութեանց, զինուորական  
դասաւորութեանց և հասարակական սովորութեանց նախնեաց  
մերոց: Խնդիր իմ ի սրբազնութենէ ձերմէ՝ ի տեսանել զտեզե-  
լութիւնս պլ. Ֆրէնսոսի՝ դիտէր առ ի դիտել զշափ ձշգրտութեան  
ի վերայ նոյն իրի, և դիմարանել ապացոյց և վաւերական վկա-  
յութեամբ՝ եթէ հարկ լինէր, զի եղեն ոմանք ոյլուր՝ նաև ասու՝  
որք ոչ կարծէին լինել առ վաղեմի թագաւորս մեր՝ նշան կամ  
կնիք արքայական: Այլ այսուամենայնիւ՝ ետու կուսակալին մե-  
րոյ՝ զամենայն հարկաւոր և դիտելի բացատրութիւնս տպադրեալ  
կամ անտիպ՝ ի վերայ այնոցիկ առարկայից, որով և գոհունակ  
և շնորհակալ եղեւ յոյժ նոյն ընդհանուր սպարապետն կովկասեան  
Նահանգացս»:

Սոյն զրութիւնից յետոյ Յ. Շ. Զրակետը մի քանի տեղե-  
կութիւններ էլ է գրել կաթուղիկոսին 1833 թ. փետրուարի 10-ին,  
որի մէջ ասում է. «Հաստատուն կնիք կամ նշան թագաւորացն  
մերոց որք տիրապէս եկին ի հնումն բուն աշխարհացն Հայա-

տանու եղև միշտ արծուանշան, իսկ կնիք թագաւորաց Փոքր Հայոց կամ Կիլիկիոյ էր նոյնպէս Առիւծանշան որպէս և զրեցի Նահապետիդ իմոյ, մինչ խնդիր եղև զայսմանէ ըստ ամենայն և ծանուցանեն պատմագիրք մեր Բուզանդ, Մովսէս Խորենացի, Մինաս պատրիարք Երուսաղեմայ, Միքայէլ վարդապետ Զամշեանց և այլք ևս, որք ձեզ քաջ յայտնի են: Զնոյն բան հաստատեն նաև ոմանք յոյն և լատին հեղինակք, նաև ոմանք կնքարանք երոպացւոց և բազում հնագետք: Վերջին դարուց Արծուանշանն միացլիանի էր նաև կնիք թագաւորացն Ասորեստանիայց: յորոց ընկալան նաև մերայինք, մանաւանդ ի ժամանակս Արշակունեաց: Զինչ ինչ ի վերայ այսոցիկ իրաց ի վերայ քաղաքական և դինական սահմանադրութեանց նախնի Հայկազանց հոչակեալ էի տպագրութեամբ ի յիշատակարանս հնագիտութեանց տպագրեալ ի Փարէզ ի 1820 ամին ի հատորն Բ. ի թղթահամարն 261 մինչ ի 311. ի խնդրելն յանցելումն յինէն, ի ձէնջ և ի կուսակալէն մերմէ հրամանաւ Պլուտով նախարարին ոչ կարէի յապաղեցուցանել զիրն սպասելով միշտ ի ձէնջ ունիլ զպատասխանի ինչ. ապա ծանուցի նոյն հետայն ի վերայ դոյն իրի զհոչակեալն տպագրութեամբ, և տալով միանգամայն ձեռագրով զհաստատութիւն նորանոր վկայութեանց քաղելոց ի հին և ի նոր հեղինակաց օտարաց կամ ի մերայնոց: Այլ ի հիմն բանին դոր ինչ աւելի քան զգբեալն իմ առ ձեզ և քան զցուցեալն իմ ի վերայ ծանուցանել կարացի զրով: Բայց բերանով պատմեցի միանգամայն զաւանդութիւն Հայոց տանել զդրօշակ Դաստառակին և խաչին Քրիստոսի առաջի թագաւորաց, կաթուղիկոսաց և կաթուղիկոսարնտիր չորից Մետրապոլուաց մեծին Հայոց: ևս սահմանադրեալ էր վասն իւրաքանչիւր զինուորական զնդից զյատուկ յատուկ դրօշակս օձանշան, աշտահականշան, աղաւնանշան և այլն, և այլն»: Ստորագրութիւնը դրած է Յակոբ Շահէն Զըրպետեան:

Սակայն մինչև սոյն երկրորդ զրութեան տեղ հասնելը կաթուղիկոսն արդէն մինիստրին ուղարկել էր իւր պատասխանը նոյն 1833 թ. յունուարի 14-ին: Այդ զրութեամբ նախ յայտնելով, որ ինքը բանակցել է Յ. Շ. Զըրպետի հետ և նա արդէն հարկաւոր տեղեկութիւնները հաղորդել է բարօն Ռոզէնին՝ մինիստրին հաղորդելու համար, աւելացնում է. «Հնախխոսութիւն և ինչ ինչ հնագոյն դրամք թագաւորական առաջի առնեն մեզ զհինդ նշանակս դրուազի թագաւորութեան Հայոց, չորս թագաւորք մեր կրէին ի դրօշակս իւրեանց զոմանս ի ժամանակի կուպաշտութեան և զոմանս զկնի լուսաւորելոյն ազգի լուսով քրիստոնէական հաւատոյ: Զորօրինակ յամի աշխարհի ըստ ժամանակադրաց 3447 Տիգրան Հայկազն թագաւոր Հայոց համախորհուրդ եղեալ ընդ Կիւ-

բոսի արքային Պարսից յառնէ ի վերայ Աժդահակայ արքային Մարաց և անդէն ի նոյն պատերազմի ինքնին Տիղրան Հայկազն սպանանէ զԱժդահակ, վասնորոյ ի նշան այսր յաղթանակութեան իւրոյ դնէ ի դրօշակ տէրութեան իւրոյ զեօթնազլիսեան վիշապ, քանզի բառս այս աժդահակ ի հայ լեզու թարգմանի վիշապ, որում ի պատճառս խրոխտ իշխանութեան նորա Աժդահակայ, փոխանակ միոյ ետ զեօթ դլուխս:

Յամի աշխարհի ըստ Ժամանակադրաց 3859 ի թագաւորել Վաղարշակայ Արշակունոյ ի վերայ Հայոց և ի բարեկարգելն զաղդ և զնահապետութիւն Հայոց, հանդիսացոյց և զօրինաւոր կարգադրութիւն պալատան թագաւորութեան իւրոյ, զի բաց յայլոց կորգեաց և զարծուէկիրս, ուստի հաստատեն բազումք, թէ նազնոյն արծիւ ունէր ի դրօշակ թագաւորութեան իւրոյ:

Յամի Փրկչի 33 Արգար Արշակունի արքայ Հայոց թղթակցեալ ընդ Յիսուսի Տեառն մերոյ, ընկալաւ ընդ թղթոյ պատասխանոյ գրութեան իւրոյ և զկենդանազրութիւն պատկերին Յիսուսի ի վերայ դաստառակի. վասնորոյ ի յիշատակ այսպիսի Փրկչական պարզեաց զսոյն իսկ կենդանազրութիւն դասեաց ընդ այլ նշաւակս գրուագի Տէրութեան Հայոց:

Յամի Տեառն 302 Մեծն Տրդատ Արշակունի թագաւոր Հայոց ի հաւատալն ի Քրիստոս և ի մկրտիլն ի սրբոյն Գրիգորէ Պարթևէ, անուանեցաւ Յոհաննէս, որ թարգմանի հեղ. վասնորոյ ի յիշատակ թարգմանութեան անուան իւրոյ և ի նշան զառն անուանեալ Փրկչին ի Յոհաննէ, դասեաց ընդ այլ նշանակս գրուագի Տէրութեան իւրոյ և զպատկեր դառին կալելոյ զձող բարձող խաչանիշ դրօշին:

Իսկ ի վերջին Ժամանակի յամի Տեառն 1198 Լևոն մեծ իշխան Հայոց ի տոհմէն Ռուբինեան յօծանիլ իւր թագաւոր ի վերայ ազգին Հայոց, զրեաց առ կայսրն Հռոմայ Հէնրիկոս 6, երէց որդի Փրիդերիկոսի 1, յորմէ պատասխանոյ թղթոյ իւրոյ ընկալաւ ընդ թագին առաքելոյ ի Պապէն Հռովմայ ի Կեղեստիանոսէ 3, և զղոշակ առիւծանշան. քանզի և յունական անունս Լէոն թարգմանի ի հայոց լեզու Առիւծ:

Որովհետեւ կամք թագաւորին և կայսերն է հաստատել զդրուադ վասն Նահանգին Հայոց, և որովհետեւ ի դրուազս թագաւորութեան Հայոց են այնպիսիք, որ ի Ժամանակս կռասղաշտութեան էին, և են որք ի Ժամանակս լուսաւորութեան ազգի մերոյ լուսով հաւատոյ քրիստոնէական, վասնորոյ կարի ցանկալի լինէր, եթէ Գերազանցութիւն Զեր աշխատէիք միջնորդ լինել, զի նշանակ կամ վերտառութիւն նահանգիս հայոց ընտրեսցի դրուազ Քրիստոսահաւատ թագաւորաց մերոց, և առաւել ևս դաստառակ Յիսուսի Փրկչին մերոյ, որ է իսկական դրուազ թագաւորութեան Հայոց, շնորհեալ ի Քրիստոսէ ի պարզ Հայոց: